

Ները տարակոյս չկայ որ վճռական դեր
մը կատարած են այս զարդանկարչային
յեղաշբջութեան մէջ։

Ու. Լ. Հոպալյն այս նոր ոճին մէջ կը
տեսնէ թուրքերուն յատուկ զարդեր, «այս
բնապաշտական ծաղիկներէն գո՞նէ մի բա-
նին թուրքիստանէ ծագում առած են, և
անկէ բերուած՝ թուրքերուն միջոցաւ՝»
կ'ըսէ:

Եթէ ճիշդ ըլլար այս տեսակէսը, ի՞նչ-
պէս կարելի է բացատրել, որ ասոնց յայտ-
նութիւնը յապաղած ըլլայ՝ մինչեւ Ժ. Պա-
րուն կէսը : Նոյնպէս, նկատառութեան
արժանի կէտ մ'ալ այս է որ՝ կակաչը,
մեխակը, նարկիսը, յասմիկն ու վարդը
թուրբ լեզուի մէջ անուն չունին, և պարա-

թէնէ առնուած բառերով կը կոչուին։
ԺԵ զարու վերջերուն և ԺԶ զարու
իզքին կապոյտ և ճերմակ յախճապա-
է անօթներուն շարքը Նիկիոյ կարենալ
րազրելու համար, անհրաժեշտ պայման
Քէօթահիացի Արքահամի՝ 1510 թուա-
ր հայկական բաժկամանին Նիկիոյ վե-
րերիլն ապացուցանել։ Արդ ժամանոցին
ժամանագրութիւնը ինքնութեան վաւերա-
ւողթ մ'է զոր կը հաստատեն ուրիշ ցուց-
ւնքներ և Հոպսընի Նիկիոյ վերագրու-
հակառակ է արձանագրութենէն բխող
ամառանական եռականութեանու։

Յարկ. Գիր. է ՄԻՐԱՑԵԼ ԱԼԵՄՆԵԱՀ

1. Ու Լ. Հոգսըն, անդ. Էջ՝ 89.

ՈՒԽԱՀԱՅՑ ԹԱՏՐՈՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(ԱԿԶԵՒՑ ՄԻՆՉԵԿ 70-ԱԿԱՆ ԹԻԱԿԱՆԸ)

ՊԱՏՄԱ-ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Դաստիարակություն 1935, էջ 101)

Նիկողայոս Աղադարեան: Վաթուռնական
թուականների կենցաղագրական պիտի
առաջին հեղինակը համարում ն. Ալա-
զաթեանը: Ո՞վ է այս գրամատուրզը: 1856
թւին աւարտում է նա Թիֆլիսի գիմնա-
զիան, ապա անցնում Մոսկուա և մտնում
կայսերական համալսարանը: 60 - ական
թւականների սկզբին աւարտելով ուսումը,
վերադառնում է Թիֆլիս: 1866 թւակա-
նին տեսնում ենք նրան Թիֆլիսի օրիոր-
դաց Մարդարանում ուսումնարանում՝ որպէս
ուսուցիչ և միաժամանակ հոգաբարձու
Ներսիսեան ուսումնարանի: 1868 թւին
քաղաքային ընտրութիւնների ժամանակ
աւագ ներկայացուցիչ է ընտրում, իսկ
լըրեմիրա Արծրունու հրաժարականից յետոյ

^{1 1/2} տարի վարում է քաղաքագլխի պաշտօնը: 1869 թվին մասնակցում է Գայլիանեան օրիորդաց ուսումնարանի հիմնադրութեանը: 1875 թ. Յուլիսի 25-ին նեռնում է թոքախտից թիֆլիսում:

«Վայ իմ կորած 50 սակի» : Դեռ 1858 թվին, երբ մի խումբ ուսանողներ Մոսկվա-յում հիմնում են թատերասիրաց խումբ և հայերէն ներկայացումներ տալիս, Ա-աղաթեանը զրում է «Վայ իմ կորած 50 սակի» վերնագրով պիէսը, որ լոյս է ունենում 1859 թվին և երկար ժամանակ սաղացւում է հայկական բեմների վրայ : Թիֆլիսի ժամանակակից կեանքից վերցը-ած մի փոքրիկ կատակերգութիւն է դա: Իր կառուցւածքով թոյլ և անարւեստ է

այդ պիէսը, բայց ուշագրաւ է նրանով
որ այնտեղ շօշափուում են ժամանակակից
հարցեր, հանդէս են զալիս իրական տի-
պիքը իրենց կենցաղով, բարբերով, աշ-
խարհայեացըով և իրենց ուրոյն բարբա-
ռով։ Ոյդ բոլորը նշանակալից երեւոյթ-
ներ են ժամանակակից ոչպէտուարի հա-
մար։

Վողբւիլի հերոսն է կարապետը, որ
տգէտ, նախապաշարւած և միաժմանակ
խանդուտ մի մարդ է։ Իր կնոջ անհաւա-
տարմութեան մասին ունեցած կասկածը
փարատելու համար 50 ոսկով գնում է
կախարդական մի զլիսարկ։ Սակայն նրա
հոգեկան խաղաղ զրութիւնը խանգարում
է զլիսարկի տէրը, որ աներեւութանում է
և կարապետը մնում ծիծաղաշարժ դրու-
թեան մէջ։ Հետեւանքը։ Նրան իւելրի է
ոերում ծեծը։

Միքայէլ Պատկանեան։ Ալադաթեանից
յետոյ հրապարակ է գալիս Միք։ Պատ-
կանեանը և հարստացնում կենցազագրա-
լան կօմէդիան։ 50—ական թւականների
լերջերին և 60—ականի սկզբներին Պատ-
կանեանը թիֆլիսում ոչ միայն զերասա-
ւական խոռմը է պահում, ներկայացում-
ներ կազմակերպում, այլ և իր թարգմա-

սութիւններով ու փոխազութիւններով գարկ է տալիս թատրոնական ռէպէրտուազին և նպաստում թատրոնի առաջազիւտութեանը։ Նրա թարգմանական պիէսները և փոխազութիւնները՝ «Թուղթ խաղաղողի կեսնը»։ «Եկոլի վարժապետ» երարար ժամանակ խաղացւում են թիֆլիսի թատրոնի վրայ։ Նոյնպէս աջողութիւն են ունենում նրա ինքնուրոյն պիէսները՝ «Մօցիքուլ», «Մէկլ նշանած», «միւսը կին»։ Այդ պիէսների նիւթը անզրագառում է վիաւորապէս աղջիկ ամուսնացնելու որը։ Այնտեղ հանդէս են զալիս հինգորդունակները։ Այնտեղ է 60-ական թւականների ծայրայիշ ժամանակաշրջանը՝ Փետրոս, շահակիւնչացած վաճառականը՝ Գետրոս, կեղծաւոր, խարեսայ աստիճանաւոր մէորզը։ Հին սերնդի տիպիկ ներկայացուրդիչներն են զրանք։ Նրանց գիմաց կանգառութիւնները՝ նրանց զիմաց կանգառութիւնները՝

նած է թեթեսաօլիկ, շուայլ, նորաձեւու-
թիւնների սիրահար նոր սերունդը-թերա-
կիրթ, խակամիտ Անան, կոպիտ, անկիրթ,
անուսում և տգեղ Սօփիան, բարեկիրթ,
պարկեցա, խելացի Կէկէլը, անփորձ, պար-
զամիտ Սիմոնը: Այդ երկու հակագիր ու-
ժերը բայլսում են իրար և ահա սկսում
է ընտանեկան զրաման, որ հետզհետէ զար-
գանում է և վերջանում ողբերգութեամբ:

«Մօցիքուդ» կամ «Միջի մարդ»։ Եր-
գախառն այս կտտակերգութիւնը վերցւած
է հին հաւլաբարցիների կեանքից։ Հերոսն
է մի նորեկ սպայ։ Նա վատնում է ար-
քունական փողերը։ Փնտրում է մի հա-
րուստ աղջիկ, որպէսզի կարողանայ տալ
իր ծախսած փողերը։ Այդաեղ գեր է խա-
ղում մօցիքուլը։ Աղջկայ հայրը դէմ է,
բայց միջնորդը կարողանում է նրան հա-
մոզել։ Եւ ահա աղջիկը ծախսում է միջ-
նորդի ձեռքով։ Աւկայն հարսանիքի քէփի
ժամանակ՝ փեսացուն ձերբակալում է
իբրև արքունական փողերի վատնիչ։

« Ակիր հշանած, միւսը կին »։ Անդրադապնում է ամուսնութեան շուրջը։ Հին Թիֆլիսի վաճառկան Պետրոսն երկու անգամ սնանկանում է։ Նրա կինը՝ Նինոն ունի երկու աղջիկ՝ Սօփօ և Անանի։ Գեղեցիկ է Անան, իսկ Սօփօն՝ տգեղ։ Երկուսն էլ հասունացել են, պէտք է նշանել։ Դա է ծնողների մտածողութեան միակ առարկան։ Երանք Անանի համար վարձում են ուսուցիչներ՝ ուսուերէն և ֆրանս սերէն դասեր տալու համար։ Անան սիրահարում է քրանսերէն աւանդող ուսուցչի վրայ և նրանք առանց ծնողների գիտութեան՝ ծածուկ նշանւում են։ Մնում է Սօփօն։ Այստեղ էլ ծնողները գործադրում են իրենց հնարազիտութիւնը։ Մի անգամ աստիճանաւորի՝ Գէորգին 300 մանէթ կաշառք տալիս և նրա խորհրդով թակարդ են զցում Ալէքսանդրապօլից նոր

Եկած Արմօն անունով մի երիտասարդ,
որին ցոյց են տալիս Գեղեցիկ Անանին և
նշանում տպեղ Աօփօյին։ Պատկի օրը Աօ-
փօյի երեսը ծածկում են քօղով։ Գաղտնի-
քը չը բացւելու համար նոյն զիշերն Ա-
նանուն եւս պատկում են ուսուցիչ Նիկո-
լի հետ։

Բժիշկ Նիկողայոս Փոռցինեան: Ժամանակի հասարակութեան կեանքը հարազատ գոյներով պատկերում և կենդանի տիպերէ է գծագրում նաեւ Բժ. Ն. Փուղինեանը: 1863 թւին Թիֆլիսի բեմի վրայ ներկայացւեց նրա երկու զործողութիւնից բաղկացած զաւեշտը: Դա «Դալալ Ղազօ» խորագրով ոռւսահայ առաջին պիէսն է, ուր թիւրքահայերը հանդէս են զալիս իրենց ցաւերով ու խոհերով: Ճիշտ է, իր հրւաւածքով անմշակ է այդ պիէսը, բայց այնտեղ կան իրական կեանքից վերցրած տեսարաններ և յաջող գծագրուած տիպեր: Պիէսի հերոսն է Դալալ Ղազօն: Այդ միջնորդը զգոն է իր կեանքից և իր պարապմունքից, որովհետեւ չի կարողանում շատ փող վաստակել: Դժգոն է և նրա կինը, որ չի կարողանում ուրիշ կանանց նման «վեշերներ» (ընտանեկան երեկոյթ) աարքել: Ղազօն որոշում է կապալով վերցնել բաղնիսները և այդ ճանապարհով հարստանալ:

Պիէսի առանցքը երկու մշեցի մշտկների
սրտաշարժ տեսարանն է¹: Համակրելի
տիպ է Մշեցի պանդուխտը՝ կիւկիւը, որ
մի կտոր հացի համար տանջւում է օտար
երկնքի տակ և մաշւում է իր ընտանիքի
կարօտով։ Այնտեղ է և թեթեւամիտ երի-
տասարդ Ժան-Փուլը, որ կոտրատում է
ֆրանսերէն և ցանկանում ամուսնանալ
Ղազօյի միջոցով։ Գծագրւած է և զւար-
ճասէր մի վրացու տիպ, ու Յըլիտաձէն
է, որը պարապում է որսորդութեամբ,
քայց փող չունի, որ որսի շուն և բազէ
գնի, ուստի դիմում է Ղազօյին։ Պիէսը
ծիծաղաշարժ է զառնում նրառով, որ այն-

1. Պաօշեանի ձեռագրից պարզում է, որ պիէսի մշեցի մշակների տեսարանն իր զրածն է։ Ա. Ե.

տեղ լեզուների կատարեալ խառնակութիւն
է տիրում. Ղազօն խօսում է Թիֆլիսի
բարբառվ, կիւկիւը՝ Աշխ, Ժան-Պուլը՝
զրական, Յըրէխտաձէն՝ վրացիերէն:

«Դալալ Ղազօ»-ից յետոյ բժ. Փուղինեանը զբում է նաև «Վուր տրաբւիս, պիտի պսակւիս» կատակերգութիւնը, որ փոխազրութիւն է Մոլիէրի «Բանի ամուսնութիւն» պիէսի և «Թուղթ խաղացող» խորագրով չորս գործողութեամբ զբաման, որ նոյնպէս փոխազրութիւն է ֆրանսերէնից:

Քոչարեամբ։ Թատերական գրականութեան մէջ Քոչարեանցը յայտնի է իր «Աչա ազգասէրներ» պիէսով։ Դա ժամանակի կառավարութեան գործակալների և վաճառական դասի կեանքի և գործունէութեան մույլ մի էջը դրսեւրող դրամա է։ Դէպքը կատարում է 1859 թվին Բագու քաղաքում։ Նաւթային արդիւնարերութեան այդ խոշոր կենտրոնում ապրում է քաղաքապահ Միրզայ-Մուսայ Զուռնաչեանցը։ Նա, շնորհիւ իր դիրքի, հարստահարելով Բագրի աշխատաւորներին, կարճ ժամանակում զիզում է մեծ հարըստութիւն և ձեռք բերում մեծ անուն ու պատիւ։ Բագրում նա ունի գեղեցիկ և փառաւոր մի տուն, խակ կուրծքը զարձակ է, ու առաջի համակառ։ Առաջին

կարւած է մի քանի լսաչորով։ Սակայ
այդ փառասիրութիւնն ու զիւրը չի գո-
հացնում Զուռնաշեանցին, նա ձգտում է
էլ աւելի մեծ համբաւ և հոչակ ձեռք
բերել, մեծ ազգասէրի անուն ստանալ,
որպէսզի իրեն բոլորը ճանաչեն և իր ազ-
գանունը գրւի «Մեղու Հայաստանի» լրա-
գրում՝ որպէս մեծ հայասէր և ազգասէր։
Բայց ի՞նչպէս համնել այդ նպատակին,
մտածում է Զուռնաշեանցը։ Մրագրում է
հիմնել մի դպրոց։ Ծախսից և աշխատան-
քից ազատելու համար նա զիմում է իր
խորամանկ և խարերայ մեթոդին։ Գտնում
է իր նման փառասէր երկու հարուստ վա-
ճառական – մինը 14-րդ կարգի աստիճա-
նաւոր Թիֆլիսեցի Ալէքսէյի Գրիգորիչ
Մեշինեանին, միւսը Ասլան Լուկիշ Ներ-
կարարովին, որոնց իր քաղցր լեզով հա-

մոգում է, որ իրենց նիւթական միջոց-
ներով կառուցեն զպրոցը։ Հոգեւոր վար-
չութիւնից ստացւում է դպրոցը բանալու
թոյլտութիւնը։ Ներսիսեան զպրոցից հրա-
փրւում են հայոց լեզվի և միւս առարկա-
ների ուսուցիչները։ Ամէն ինչ պատրաստ
է։ Ասլան Լուկիշն ու Ալէքսէյի Գրիգո-
րիչը գալիս են քաղաքապահ Զուռնա-
չեանցի մօտ, որպէսզի որոշեն դպրոցի
պաշտօնական բացման օրը։ Ճիշտ նոյն
բոպէին սենեակ է մտնում նաեւ ուսւնկա-
րիչը և ներկայացնում դպրոցի մեծ ցու-
ցանակը, որի վրայ մեծ տառերով գրւած
էր միայն Զուռնաչեանցի անուն - ազգա-
նունը։ Այդ հանգամանքը սաստիկ յու-
զում է և զայրացնում Մեշինեանին և
Ներկարարովին։ Բարձրանում է սաստիկ
վէճ և խոռոչութիւն։ Այդտեղ էլ խորտակ-
ւում է Զուռնաչեանցի ամբողջ ծրագիրը
և միաժամանակ բացւում նրա խարերա-
յութիւնը և ազգասիրական կեղծ դիմակը։

Քիշմիշեանց Նոյն Փօնի վրայ էլ կառուցւած է Քիշմիշեանցի Թիֆլիսի բարքառով զրած «Քաղքի աղաթը փոխւել է» պիեսը, ուր հանդէս է զալիս նոյնպէս վաճառական դասն իր կենցաղով, հոգեբանութեամբ և այլանդակ, բացասական զծերով:

Անցըլ պատահում է Թիֆլիսում։ Մելքոն Գասպրիչ Ղատաղովը Թիֆլիսի հարուստ վաճառականների մէջ առանձնաշարադրութեալ տեղ է գրաւում։ Աշխարհում նա միայն մի իդէալ ունի. ինչքան կարելի է շատ փող զիզել. նա շատ է սիրում հարուստներին, առանձնապէս Ղազօ Կիրիլիչի Բախտամեանցին։ Աւկայն Գասպրիչ Ղատաղովն ունի մի կին, որը Թիֆլիսում իր մարդու զլիխին կակալ կոտրող յայտնի կանանցից մէկն է։ Նա է տան տէր ու անօրէնը. ամէն մի գործ տան մէջ կատարում է միայն նրա հրամանով և կարգադրութեամբ։ Այդ կինն ունի նաև այլ զծեր. շատ է սիրում ուրիշների մասին խօսել, բամբասել, լոտո խաղալ։ Ունի երկու զաւակ՝ 18 տարեկան մի աղջիկ, որը մօր ձեռքում կատարեալ գերի է և

մի տղայ, Նիկողայոսը, որ ուսանում է
Մոսկվայում: Որբան կինը շռայլ է, ծախ-
սող, այնքան Մելքոն Գասպրիչը ժլատ
է, փողասէր և խնայող: Այդ պատճառով
էլ նա ոչ իր կնոջն է սիրում և ոչ էլ
որդուն, որովհետեւ երկուսն էլ շարունակ
փող են պահանջում:

Մոսկվայի համալսարանը բեկում է առաջ բերում Գասպրիչի որդու՝ Նիկողայոսի մտքի և աշխարհայեցքի մէջ: Նաւարտակալով համալսարանը, վերադառնում է Թիֆլիս՝ նոր գաղափարներ և նոր մըտքեր բարոզելու գեղեցիկ իդէաով համակած, բայց նա շատ շուտ է յուսահատում: Թիֆլիսի հասարակութեան մէջ տիրող մոայլ խաւարը, իր բրոջ ստրկական վիճակը, հօր յետաղիմական տեսակէտները և մօր ծայրայեղ տգիտութիւնն այնքան ուժեղ են ազդում իր վրայ, որ նա այդ բացասական երեւոյթների գէմ չի կարողանում պայքարել և ապրում է իր սեփական մտորումներով: Վերջում մայրը նրա համար երկու հազար թուման օժիտունեցող մի աղջկի է գտնում և առաջարկում ամուսնանալ, բայց նա մերժում է և նշանաւում իր սիրած աղջկայ վրայ:

Իրիցիութեամբ։ Աս զրել է մի գործութեամբ «Հնարագէտ կին» խորագրով վօլուսիլը։ Անցըը տեղի է ունենում թիւ-

ֆլիսում։ Նիկոլայ Սէրգէիչ Վարդգուլովը
Թիֆլիսեցի տիպիկ վաճառական է։ Նա
շատ է սիրում փող խաղալ։ Շատ ան-
գամ է նա խաղացողների յայտնի կլու-
րում արծաթ մանէթ տարել և տարւել։
Նրա կինը՝ Սոփիին շատ է սիրում Գե-
ղեցիկ հագնւել, զարդարւել և հասարա-
կութեան մէջ փայլել։ Յանկանում է մի
«բուռնուս» առնել, որի համար Սէրգէի-
չից ինքրում է երեսուն արծաթ, բայց
մարդը մերժում է պատճառաբանելով, որ
պարտը ունի սառափ լովանէին։ Սոփիին
խոստանում է սառափին ետ ուղարկել,
երբ նա գայ իր պարտը պահանջելու։
Սէրգէիչը համաձայնում է և ՅՈ արծաթը
յանձնում կնոջը։ Նոյն բոպէին պատահ-
մամբ զալիս է լովանէն։ Սոփիին նրան

սիրալիքը ընդունում է և քաղցր խօսակցութեան բռնում։ Եւ ամէն անգամ, երբ եօվանէն իր ստանալիք փողի մասին յիշատակում է, Սոփիօն իսկոյն փոխում է խօսակցութեան նիւթը։ Եւ այդպէս մինչեւ կէս զիշեր։ Սոփիօն հասկացնում է Եօվանէին, որ արդէն ուշ է, ժամանակն է մեկնելու։ Ծառային լապտերով սենեակ է ուղարկում և սառաֆին ճանապարհ դնում։

Գեղրդ Տէր-Աղքասանդրեան։ 1860 թւին
թատերական ռէալիստական գրականու-
թիւնը հարստանում է մի նոր պիէսով։
Դա «Ուխտագնացութիւնն» է, որի նիւթը
վերցւած է Թիֆլիսի մանր բուրժուական
խափ կեանքից։ Եազոր Սէրգէյիչի ընտա-
նիքը պատրաստում է Թէլէթ ուխտի գնալ։
Առաւօտ է։ Տան մէջ ամէն ինչ տակն ու-
վրայ է, փուրգունն էլ զեռ չի եկել։ Այդ
բոլորը Սոփիային շատ են անհանգստա-
ցնում և յուզում։ Եազոր Սէրգէյիչն էլ
փոխանակ կնոջն օգնելու, պատրաստում
է գնալ իր գործին։ Կինն առաջարկում է
նրան նախ ընտանիքին ճանապարհ ղնել
աղա գործի գնալ։ Ակսում է վիճաբանու-
թիւնը։ Այդ միջոցին գալիս է փուրգունը։
Եազոր Սէրգէյիչը մալականի փուրգունի
փոխարէն վարձում է թուրքի փուրգուն,
իսկ Սոփիոն թուրքերէն չը գիտէ։ Վէճն
աւելի է սրտում։ Վերջապէս փուրգունը
ճանապարհ է ընկնում։ Կենորոնական
փողոցներից մէկում թուրք կառապանը
կանգնեցնում է փուրգունը, որպէսզի ձիե-
րին պայտել տայ։ Այդ էլ բաւական չէ։
Թուրքն իր փորբ եղբօրն է յանձնում
փուրգունը, որ Թէլէթ տանի։ Այս բոլոր
ճանգամանքները սաստիկ յուզում են Սո-
փիոյին և նա ամբողջ ճանապարհին չա-
րանում է իր մարդու վրայ։ Տեղի է ու-
նենում մի նոր դէպք։ Կէս ճանապարհին
անսպասելի կերպով յայտնուում է մի թուրք
և պահանջում փուրգունին լծւած չորս
ձիերից երկուաը։ Կառապանը մտրակում
է ձիերին, որոնք կատաղած քաշում են
փուրգունը։ Սոփիոն և երեխաներն աղա-
պակում են և օգնութիւն կանչում։ Այդ

միջոցին հանդիպում են չորս երիտասարդ՝
ճանապարհորդներ, որոնք մի կերպ կանգ-
նեցնում են կատաղած ձիերին։ Ջուրգունը
նորից ճանապարհ է ընկնում։ Ակսում է
սաստիկ անձրեւ և կարկուտ։ Ոսկիոն իր
«Ճակտին սիվ թանաքով զրած» այդ բոլոր
ձախորդությունները վերազրում է իր բազ-
մաթիւ մեղքերին։ «Ի՞նչ անիմ, փուլս էհամ
նրա օղորմութէնին։ Վունցօր զրել է միզ
ամա, էնէնց էլ պիտի ըլի» — բացական-
չում է Ոսկիոն։

Գալուստ Շերմագանեանց։ Հայ թատրոնի պատմութեան մէջ առանձին տեղ է բռնում Շերմագանեանցը նաեւ իրքեւ գրամատուրգ։ 1861 թւին նա դարձեալ հրապարակ է զալիս և աւելի զարկ տալիս թատերական զբականութեանը։ Եոյն թւին զրում է նա երկու կենցաղային պիէս։ Դրանցից առաջինն է.

«Իմ եղանակը Արտագե ա»: Այս պիէսն
այժմէական և հետաքրքիր բովանդակու-
թիւն ունի: Դա հին և նոր սերնդի պայ-
քարն է՝ կենցաղային ֆօնի վրայ: Նոր
սերունդը դժգոհում է հին կենցաղի ստըր-
կութեան դէմ: Սակայն այդ բոլորը դժգո-
հութեան շըջանակով էլ սահմանափակում
է: Զկայ վճռական, անողոք պայքար: Զկայ
բեկում, յեղաշրջում: Չնայած այդ թերու-
թիւններին, պիէսը կարդացում է հետա-
քարքրութեամբ և ընթերցողին պահուն
կենտրոնացած վիճակում:

Դէպքը պատահում է Աստապատ գիւղում։ Այդ գիւղիցն է Շողերը։ Դա մի որբանջկէ է, որին խորթ մայրը նշանում է իր չի սիրած երիտասարդի հետ։ Շողերը լուռ ու մունջ հնազանդում է նահապետական օրէնքին, բայց ամէն անգամ, երբ մտածում է, որ իր ամբողջ կեանքի ընթացքում պիտի ապրի եր չի սիրած մարդու հետ, մի ծանր զգացմունք նրան սաստիկ յուղում է և տանջում։ Այդպէս է և նրա սրտակից ընկերուհու՝ Աչէրի դրութիւնը։ Նրա ծնողները եւս նշանում են իր և տիկած և չի սիրածի հետ։

վրայ և միասին ողբում իրենց գժբախտ
կեանքը: «Մեր տավար անց անկեզու,
ձեռնէրնուց բոնում ան՝ տալում ան՝ ումը
ուզում ան. մեր էլ քօռ քօռ պէտք ա մեր
մհծէրին հնազանդվինց, աշխարքումս միշ-
նակ ես ու դու խօմ չի՞նց»: Կամ՝ «Ասել
ամ, էլի ասում ամ, մեր անկեզու, ձեռ-
քէրնիս, ոտնէրնիս, աչքէրնիս կապած
կենդանի անց, ասում ան նրան սիրէ,
սրան մի՛ սիրել, նրան զնա՛, սրան մի՛
զնալ – մեր էլ պէտք ա նրանց խօսքին
ականջ զնինց. ճարերնիս ի՞նչ ա» – այս-
պէս է զատում Աչքը: Եւ նահապետա-
կան ստրկացնող կենցաղի դէմ պայքա-
րելու անզօր, նրանց արտայայտում են
միայն երբեմն իրենց գժգոննութիւնը: Մի
օր էլ Աչքը յուսահատ գոչում է. «Թա-
ղեմ նրա զլուխը, նա իմ նշանածը չի»:
Հետեւանիքը: Հայրն ու եղբայրներն այն-
քան ծեծում են Աչքին, որ կապտում է
նրա մարմի մեծ մասը: Նոյնիսկ այդ ե-
րեկոյ նրան հաց էլ չեն տալիս ուտելու:
Այդպիսի հանգամանքներում Աչքն ու
Շողերը վճռում են վերջ տալ իրենց զլժ-
բախտ կեանքին: Երկուսն էլ նետում են
երասիս գետը:

«Ազգային հարսանելիք»: Շերմագաննեանցի երկրորդ պիէսն է «Ազգային հարսանելիք», որի նիւթը վերցւած է Թաւրիզի հայերի կեանքից: Պիէսն ազգագրական և կենցաղային նշանակութիւն ունի և կարգացւում է հետաքրքրութեամբ: Շերմագաննեանցը նկարչի յաջող վրձինով նկարել է հայկական հարսանիքի ամենաբնորոշ տեսարանները, որոնց առանձին երանգ են տալիս նաեւ ժողովրդի սովորութիւնները, բազմազան պարերը, երաժշտական գործիքները: Պիէսի գեղարվեստական արժէքն աւելի բարձրացնում են գծագրւած ամբողջական տեսարանները, մանաւանդ ժողովրդի տարրեր խաւերն ու տիպերը, որոնց հանդէս են գալիս իրենց ուրոյն խօսակցութիւններով, հայեացըներով, տարրազով և կենցաղով: Փաստ է, որ հայկական հին կենցաղի բնորոշ գծերից շատերն այսօր գոյութիւն չունին են:

Համարեա մոռացւած են։ Շերժազանեանցի
պիէսն այդ կենցաղը դրսեւորող արժէքա-
ւոր մի վաւերագիր է, որ ձեզ բնորոշ գա-
ղափար է տալիս պատմաշրջանի հայ ժո-
ղովրդի ազգագրական - կենցաղային տի-
պիկ գծերի հետ։ Այդ տեսակէտից էլ
Շերժազանեանցի «Ազգային հարսանիք»
պիէսն արժանի է ուշադրութեան։

թժիշկ Միքայել Տէր - Գրիգորեան։ Հայ թատերական գրականութեան պատմութեան մէջ բժ. Միք. Տէր - Գրիգորեանն առանձնայատուկ էլ է զրաւում։ Վաթ-սունական թւականներին, երբ հայ թատերական գրականութիւնը մի անմիտիթար պատկեր էր ներկայացնում, հէնց այդ մի-ջոցին նրա զրչի տակից դուրս են գտիս մի շարք պիէսներ, որոնցով նա զարկ է տալիս կենցաղային կատակերգութեան։ Իր ժամանակի բեղմաւոր այս զրամատուրզը հետզհետէ զրում է. «Վո՞յ քի իմ վեչերը», «Պէտօի տկնուրը», «Էս էլ քի մոցիցլութին», «Խոտորնակին խոտորնակ», «Նի-նոյի նշնւիլը», «Պառաւներուն խրատ», «Ո՞վ է մեղաւոր», «Ժլատ»։ Պիէսների այս երկար շղթան ցոյց է տալիս Տէր - Գրի-գորեանի թատերական գրականութեան մատուցած խոշոր ծառայութիւնը։ Այդ պիէսների հետ կապւած են մեր յայտնի գերասաններից շատերը - Առւբիսեսեան, Ա-մերիկան, Գ. Միքաղեան, Սօփիա Մէ-լիք - Նազարեան, Քէթեւան Արամեան, Պաթենիկ Զմշկեան։

Բայց նշենք մի հանգամանք: Այդ պիտու
ները զբում է նա արագ, մէկ կամ երկու
զիւերւայ մէջ ստեղծագործում է մի վօ-
զըփլ կամ զլամա և յաջորդ օրը դնում
բեմի վրայ:

— Առնդուկեանը ամիսներով, և տարիներով երբեմն, — գրում է Զմշկեանը, — պարապում էր իւր ամէն մէկ բեմական աշխատութեան վրայ, իսկ Տէլ-Դրիգորիկանցը մէկ կամ երկու գիշերւայ միջոցում գրում էր մէկ թեթեւ զօդքիլ, կօմչդիա կամ գրամա... Նա երբեք երկար ու բարակ չէր մրածում պիէս գրելու համար, բաւական էր, որ նա բարոնէր մէկ որեւից զաղափար, մէկ իմաստ և իսկոյն

Կառնէր գրիչը և երկու կամ երեք գիշերայ
մէջ կ'զրէր ամբողջ մէկ պիէս և կ'զրէր այն-
պէս, որ ոչ ոք մեզանից չէր իմանալ երբէք
թէ նա նոր բան է պատրաստում բեմի հա-
մար: Կը պատահէր այնպէս, որ կ'զար կըրկ-
նութեան և թեւի աակից կ'հանէր մէկ հաստ
տետրակ գրած իւր ձեռքով, գեղեցիկ և մա-
քուր ձեռքով և շատ սառը ձեռով կառաջար-
կէր մեզ խաղալ նորա նոր գրւածքը, կամ
պատահէրով ինձ կամ ընկերներիցս մէկին,
կ'խնդրէր հաւաքւել նորա մօտ, սովորաբար
երեկոյեան թէյի ժամանակ, և կ'կարդար իւր
նոր գրւածքը, որ երբէք սովորութիւն չունէր
շատ ուղղելու, նաեւ արտազրելու, ինչպէս
կ'վերջացնէր պիէսը, այնպէս էլ կ'յանձնէր
իսկոյն ներկայացնելու:

Այսպէս էր Տէր – Գրիգորեանը։ Նիւթը
գտնելուց յետոյ նա այլեւս բազմակողմա-
նի կերպով չի մշակում իր պիհսների բո-
վանդակութիւնը, աւելի սերտ կերպով չի
ներդաշնակում տեսարաններն իրար հետ。
«շտապում էր իր թատրոնական գրւածք-
ներում հանդիսանալ իրրեւ լոկ նկարիչ
միայն»։ Այդ շտապողականութեան պատ-
ճառով էլ տուժում են և նրա պիհսները։
Ճիշտ է, նա ծաղրում է, մտրակում հա-
սարակութեան բարքերը, արատները, մեր-
կացնում մարդկանց թերութիւնները, բայց
նրա ծաղրը կարիկատուրային է, նրա պատ-
կերները սոսկ նկարչական են։ Նրա հիւ-
մօրի մէջ չկայ դառնութիւն, նրա ծիծաղից
չի կաթում արտասուբ։ Ճիշտ է եւս այն,
որ նա գծագրել է կենդանի, շարժող մար-
դիկ, բայց դրանք վարպետորէն վրձինւած
դրամատիկական ուժեղ տիպեր չեն։ Հե-
րոսների հոգեկան դրութիւնը, ներքին աշ-
խարհը ցայտուն գոյներով չի պատկերա-
նում։ Սակայն, չնայած այդ թերութիւն-
ներին, նրա պիհսներում ամրող գլուխներ
կան, որոնք հմուտ նկարչի վրձինի ստեղ-
ծագործութիւններ են և կարդացում են
հետաքրքրութեամբ։ Առհասարակ այդ
պիհսները 60-ական և 70-ական թւա-
կանների թատրոնական ոչպէտուարի մէջ
պատւաւոր տեղ են գրաւում և յաճախ
ներկայացւում բեմերի վրայ։ Ահա նրա
զինաւոր պիհսները։

«Վեյ քի իմ վեչերը»։ Ժամանակակից
հասարակութեան բարքերը զբսեւորող հե-
տաքրքիր մի պատկեր է դա։ Պատմաշը ջա-
նի բուրժուազիան ունի իր ուրոյն, տիպիկ
սովորութիւնները։ Վեչեր սարքելն այդ
բարքերի մէջ ուրոյն տեղ է գրաւում։ Հա-
րուստ կանայք սարքում են մեծածախոս
հրաւերներ և ահազին փողեր շռայլում։
Ել ո՛վ ասես չի ուզում վեչեր սարքել։
Նոյնիսկ խանութպանի կինը՝ կէկէլը յետ
չի մնում հարուստ կանանցից։ Նա վեչեր
է սարքում և հրաւիրում հիւրեր։ Բայց
ամուսինը եղբօր հետ միանում է և եկող
հիւրերին անպատճելով յետ վերադար-
ձնում։ Խանապատմ է եկեւութեա, եկեւու

«Պէտօի տկձուրը»։ Այստեղ հեղինակը
ծաղրում է ժողովրդական սնապաշտու-
թիւնը։ Տան ծառան՝ Պէտօն կառապանի
ետ լաւ կոնծում է տկի զինուց և փըռ-
ում գետնի վրայ։ Եւ այդ այն ժամանակ,
ըր ընտանիքի անդամները պատրաստում
ն ուխտի գնալ։ Գերմանացի կառապանը
տապեցնում է տնեցոնց, որ շուտ ճա-
պարհ ընկնեն։ Պէտօի դրութիւնը,
տկայն, փոխում է պատկերը. բոլորն
լ կարծում են, թէ Պէտօն «խելքիցը
ժւել է»։

«Խոտարթեակին խոտարթեակ» : Եոյն սնաւ
աշտութեան ֆօնի վրայ կառուցւած է
աեւ «Խոտորնակին խոտորնակ» պիէսը :
բամայի հերոսը նկարւած է բաւական
արպետ վրձինով : Դա հարուստ մի ծե-
ռնի է – կարապետը : Ժլատ, որդեսէր,
այց միաժամանակ վաւաշոտ է այդ ծե-
ռնկը : Ունի մօտ երեսոն տարեկան մի
ողի – Օսէփը : Փոխանակ իր հասակն ա-
սծ որդուն ամուսնացնելու, ինքն է ա-
ւանանում և այն էլ 18 տարեկան մի
զեցիկ օրիորդի – կէկէլի հետ : Օրիորդի
ոյրն իր աղջկան այն յոյսով է «Յօփակ
բաւթառ» կարապետին տալիս, որ նա
տով կ'մեռնի և ամբողջ հարսառութիւնը
մնայ իր աղջկան : Այստեղ մեծ գեր են

խաղում զանագան ջաղուները: Ծերունին
չ'դիմանալով կասկածներից առաջացած
տանջանքներին, մեռնում է անիծելով իր
«օձ» կնոջը:

«Ես եկ քի մօցիքրուրին»։ Այն էբդաշնակ
ամուսնութիւնը պատկերող հետաքրքիր մի
կատակերգութիւն է, ուր պայծառ զոյնե-
րով հանդէս է գալիս նաեւ մօցիքրուը -
Եսային։ Պիէսում նկարագրւած է նաեւ
տիպն այն զիտակից, կրթւած, ջահէլ,
բայց աղքատ օրիորդների, որոնք հնա-
զանդելով իրենց ծնողների կամքին, ա-
մուսնանում են ծեր, ժլատ, անկիրթ ու
իրենց բոլորովին անհամապատասխան,
բայց շատ հարուստ մարդկանց հետ։ Ահա
ձեզ մի պատկեր։ Վաթուուն տարեկան
բաշալ, հարուստ ծերունի կարապետն ա-
մուսնանում է ինստիտուտում կրթւած մի
ջահէլ աղքատ օրիորդի՝ կէկէլի հետ։ Բայց
շուտով սկսում է դրաման։ Ծերունին
ապրում է հոգեկան ծանր զրութեան մէջ։
Անվերջ կասկածում է իր կնոջ հաւատար-
մութեան վրայ։ Կինն ստեղծւած ծանր
զրութեան վերջ տալու նպատակով սովո-
րական մի խաղ է սարցում։ Այլպիսով
ցոյց է տալիս իր հաւատարմութիւնը։

«Ճլատ»: Դա Արօլիէրի գծապրած կենացանի տիպերից մէկն է, որի կեանքի միակ նպատակն է հարստութիւնը: Անվերջ փող դիզել, կուտակել ամէն տեսակ միջոցներով - խարելով, ստելով, կերծելով, խարշախելով: Այսպէս է ժլատը, բարոյական կեղադի մէջ խեղղւած, այլանդակ, հրէշային մի տիպ:

Ահա ինչպիսի նիւթեր է գտնում Տէր-
Գրիգորեանն իր պիէսների համար։ Ահա
ինչպիսի չնչին նիւթերից նա գրում է
վօղըւիներ, կօմէզդիաներ և զբամաներ։
Այդ պիէսները ժամանակաշրջանի հասա-
ռակութեան տարբեր խաւերի կեանքը
պատկերող և նրանց բացասական, ախ-
տաւոր գծերը ցոլացնող մի-մի ցայտուն

վաւերագրեր են։ Եւ եթէ դուք ուզում էք
կօնկրէտ զաղափար կազմելի, թէ ի՞նչ պատ-
կեր էր ներկայացնում 60-ական և 70-ա-
կան թւականներին Թիֆլիսի հասարակու-
թեան կենցաղը, ինչպիսի՞ նախապաշա-
րումներ, այլանդակութիւններ են իշխել,
ի՞նչ էր այդ հասարակութեան կուլտուրա-
կան մակարդակը, այդ բոլոր հիմնական
հարցերի հետ ծանօթանալու համար թեր-
թեցէք Միքայէլ Տէր-Գրիգորեանի պիէտ-
ները։

Բաւական ճիշտ է արձանագրում այս
պատմաշրջանի երեք զլիստոր ղրամա-
ռուրդների գերը Վրթանէս Փափազեանն
որ «Պատմուրիւն հայոց գրականուրեաև »
պրոբում (էջ 438): Ահա նրա բնորոշումը,

— « Թէ Պատկանեանը, թէ Փուղինեանը և
թէ Տէր - Գրիգորեանը զրում էին մասամբ
Թիֆլիսի կեանքից և զրեթէ Թիֆլիսի բար-
բառով։ Եռոր տիպերն առնում էին անմիշ-
ջապէս իրենց շուրջը գտնւող հասարակութեան
խաւերից։ Ի հարկէ, յաճախ գունաւորում էին,
շպարտում կոպիտ ներկերով, սակայն յաջողու-
թեամբ կարողանում էին պատկերացնել բար-
քեր, սովորութիւններ և այս ու այն ախտա-
ւոր յատկութիւնները։ Աւելի շատ գրում էին
աղջիկ ամուսնացնելու մասին, հանդէս էին
բերում միջնորդ Կանանց (մօցիքուլ) և տղա-
մարդկանց, որոնք գրամի համար ամէն խա-
բէութեան պատրաստ էին, գծում էին աղջիկը
մարզու տալու հոգսով բնուած հայրերի և
մայրերի տիպարներ, սնանկացած վաճառ-
կանների դէմքեր և ւեայն։

Այդ ամէնի մէջ սակայն պակասում էր հիւտուծքի և հիւնածքի (կանվա) վարպետութիւն և մանաւանդ զաղափարի մեծութիւն։ Բոլոր մինչեւ այդ գրւած կենցաղական պիէսաները ժողովածուներ էին տիպերի և լուսանկարչական նկարների ներկած ծաղրաշարժ և վառ, յաճախ անընական գոյներով։ Պակասում էր գեղարմէստական այն շունչը, որ կեհանք է տալիս պատկերներին»։

(Շաբումակելի) ԱՐԱՄ ԵՐԵՄԵՆ